Հավելված 1
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
16 սեպտեմբերի 2024 թվականի N 346 -Լ որոշմամբ
Գործում է սկսած 2024 թվականի սեպտեմբերի 16–ից

Նոր ավանդների ներգրավման արշավի իրականացման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ.

1.1 **Արշավ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից 16.09.2024թ-ից 31.12.2024թ-ը ներառյալ իրականացվող արշավ:
1.2 **Ավանդ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ը մասնաճյուղերում, ինչպես նաև Պրեմիում բանկային ծառայությունների վարչության կողմից Արշավի ընթացքում նոր ներգրավված (փոխանցված կամ մուտքագրված Բանկի հաշվեհամարին 16/09-ից հետո) ժամկետային ավանդներ:
1.3 Արշավին մասնակցելու դեպքում հաճախորդն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները, որոնք համարվում են վերջնական և անվիճարկելի:

2. Արշավի պայմաններ.

2.1 Արշավի շրջանակներում՝ 16.09.2024թ-ից 31.12.2024թ-ը ներառյալ նոր ներդրված Ավանդների համար գործող պայմաններն են.

- 5 000 ԱՄՆ դոլար (համարժեք այլ արժույթ) և ավել գումարով՝ 6 /վեց/ ամիսը գերազանցող ժամկետով ավանդների ներդրման դեպքում, ավանդի ներդրման տոկոսադրույքը սահմանվում է 0,25%-ով բարձր տվյալ ավանդատեսակի համար Բանկի հրապարակային տոկոսադրույքից:
- 50 000 ԱՄՆ դոլար (համարժեք այլ արժույթ) և ավել գումարով՝ 6 /վեց/ ամիսը գերազանցող ժամկետով ավանդների ներդրման դեպքում, ավանդի ներդրման տոկոսադրույքը սահմանվում է 0,5%-ով բարձր տվյալ ավանդատեսակի համար Բանկի հրապարակային տոկոսադրույքից:

2.2 Հաճախորդների կողմից սույն պայմանների 2.1. կետով սահմանված չափերով ավանդների ներդրման դեպքում Արշավի պայմանների կիրառման համար լրացուցիչ գործողություն չի պահանջվում:
2.3 Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելուց հետո: